հատուկ պահպանվող տարածքների» մասին ՀՀ օրենքով սահմանված առանձնահատկություններով, հանդիսանում են բնակության միջավայր Հայաստանի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող կենդանական ու բուսական աշխարհի օբյեկտների համար, դրանց հարակից տարածքում առկա են պատմամշակութային և բնության եզակի համալիրներ, ունեն յուրահատուկ և եզակի աշխարհագրական դիրք և երկրաբանական ծագում:

Ջրային օբյեկտ-բնության հուշարձանի տարածքում ցանկացած գործունեությունը կամ դրա ցանկացած տեսակի օգտագործումը չպետք է հակասի բնության այդ հուշարձանի պահպանման ռեժիմին:

Հակահրդեհային նպատակներով կարող են օգտագործվել խմելու ջուրը, ինչպես նաև ոռոգման, արհեստական ու բնական ջրամբարների, լճերի և լճակների, ջրավազանների, ջրանցքների, գետերի և առուների ջրերն ու անդրսահմանային ջրային ռեսուրսները:

Հրդեհների մարման ժամանակ ջրի անհրաժեշտ քանակը պետք է տրամադրվի անարգել՝ անկախ առկա ջրի նպատակային նշանակությունից և պատկանելությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ ջրի օգտագործումը կարող է հանգեցնել տեխնոլոգիական գործընթացների վտանգավոր խաթարումների:

Ցամաքուրդային (դրենաժային) ջրերի օգտագործումը, բացառությամբ ազատ ջրօգտագործման դեպքերի, իրականացվում է ջրօգտագործման թույլտվության հիման վրա: Արգելվում է ցամաքուրդային համակարգերից ջրօգտագործումը՝ դիմհարներ ստեղծելու միջոցով:

Ցամաքուրդային ջրերի օգտագործումը իրականացվում է պայմանագրային հիմունքներով՝ համաձայն ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնների:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ջրային ռեսուրսների պահպանության ոլորտում վերահսկողություն է իրականացնում ՀՀ Բնապահպանության նախարարության Բնապահպանական պետական տեսչությունը:

Վերահսկողությունն իրականացվում է.

ա) ջրօգտագործման թույլտվության պահանջների կատարման,

բ) ջրային ռեսուրսներից իրականացվող ջրառի և ջրային ռեսուրսներ թափվող վնասակար նյութերի հաշվառման,

գ) ազգային ջրային պաշարի և ջրային ռեսուրսների պահպանմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացման,

դ) ջրառի ծավալների ջրօգտագործման նպատակայնության և ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի, ինչպես նաև դրանցում պարունակվող վնասակար նյութերի չափաքանակների պահպանման,

ե) ջրային ռեսուրսներից իրականացվող ջրառի թույլատրված ծավալների պահպանման,

զ) ջրօգտագործողների կողմից ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման նորմերի ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների (բացառությամբ սանիտարական պահպանության և անօտարելի գոտիների) պահանջների կատարման,

է) ջրային ռեսուրսների առաջարկի և պահանջարկի աշխատանքների կազմակերպման և իրացման,

ը) ջրային համակարգերում ջրակորուստների նորմատիվային չափաքանակների նկատմամբ:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն տեղեկատվական թերթիկում տեղեկատվություն է տրվում ջրային ռեսուրսների օգտագործման թույլտվության ընթացակարգի, ջրօգտագործման տարբեր ոլորտների և ձևերի, ինչպես նաև ջրօգտագործման ոլորտում իրականացվող պետական վերահսկողության վերաբերյալ:

Մայիս, 2005

ՀՀ-ում ջրային ռեսուրսների օգտագործման հարցերը կարգավորվում են ՀՀ Ջրային օրենսգրքով և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերով:

Ջրային ռեսուրսների կառավարման և օգտագործման թույլտվության հարցերով զբաղվում է ՀՀ Բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների գործակալությունը (հետագա տեքստում՝ Գործակալություն):

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Ջրօգտագործման համար անհրաժեշտ է ստանալ համապատասխան թույլտվություն:

Առանց թույլտվության կարելի է օգտվել ջրային ռեսուրսներից ազատ ջրօգտագործման ռեժիմով: Ազատ ջրօգտագործում է համարվում.

ա) այնպիսի շահագործումը, որը նպատակաուղղված չէ շահույթ ստանալուն,

բ) հանգստի, լողալու, ջրային մարզաձևերով (այդ թվում՝ առանց շարժիչների օգտագործման ջրային սպորտաձևերով) զբաղվելը,

գ) կարթով ձկնորսությունը և սպորտային որսորդությունը,

դ) տեղումների օգտագործումն անձանց սեփականություն հանդիսացող հողատարածքներում,

ե) ջրի օգտագործումը հակահրդեհային նպատակներով,

զ) բնապահպանական նպատակներով սանիտարական ելքերի համար ջուր վերցնելը:

Գործակալությունը որոշ դեպքերում կարող է որոշակի ջրօգտագործողների ազատել ջրօգտագործման թույլտվություն ստանալու պարտավորությունից՝

ա) եթե այդպիսի ջրօգտագործումն էական չէ,

բ) այնքան ժամանակով, քանի դեռ այդպիսի գործունեությունը չի խախտում կամ չի սպառնում խախտել ջրերի ստանդարտները:

Ջրօգտագործման թույլտվությունը տրվում է դիմողի հայտի հիման վրա, որը ներկայացվում է Գործակալություն: Հայտը ստանալուց հետո, 30 օրվա ընթացքում, Գործակալությունը նախնական կարծիք է տալիս հայտն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ՝ հայտը ներկայացնող անձին ուղարկելով հայտի նախնական քննարկման արդյունքները:

Գործակալությունը ջրօգտագործման թույլտվություն ստանալու հայտը կարող է ներկայացնել Ջրի ազգային խորհրդի քննարկմանը: Այդ դեպքում հայտի քննարկման գործընթացը կարող է երկարաձգվել մինչև 60 օր: Այնուհետև անցկացվում է հայտի վերջնական քննարկումը, որից հետո ջրօգտագործման թույլտվության հայտի վերջնական որոշումը՝ հարակից փաստաթղթերով, ներկայացվում է հայտատուին:

Մերժման դեպքում հայտատուն իրավունք ունի բողոքարկելու որոշումը վերադասության և դատական կարգով:

Ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո, 30 օրվա ընթացքում, հայտատուն պետք է ստորագրված թույլտվությունը վերադարձնի Գործակալություն, որը 10-օրյա ժամկետում գրանցում է ջրօգտագործման թույլտվությունը և դրան կից պայմանները:

ՏԱՐԲԵՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անձի սեփականությունը համարվող հողամասում ձևավորվող գրունտային ջրերը տվյալ անձի կողմից օգտագործվում են՝ դրա մասին տեղեկացնելով ՀՀ Բնապահպանության նախարարությանը՝ նշելով ջրօգտագործողի անունը, ազգանունը, ջրօգտագործման նպատակը, ծավալն ու ջրառի վայրը:

Գրունտային ջրերը խմելու և ռեկրեացիոն նպատակներով տվյալ անձի կողմից կարող են օգտագործվել միայն ջրօգտագործման թույլտվությամբ:

Սույն կարգի խախտման դեպքում օգտագործողը զգուշացվում է, իսկ կրկնվելու դեպքում՝ ենթարկվում վարչական պատասխանատվության:

Բնական բուժիչ ջրային ռեսուրսներն օգտագործման է տրամադրում ՀՀ Բնապահպանության նախարարությունը՝ ՀՀ Առողջապահության, Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունների եզրակացությունների առկայության դեպքում: Բնական բուժիչ ջրային ռեսուրսների՝ բուժման նպատակով, ըստ բժշկական ցուցումների, նպատակային և գերակայական օգտագործմանը ներկայացվող պահանջները պարտադիր են ջրօգտագործման և դրա թույլտվության ձևակերպման ընթացքում:

Ջրօգտագործողները պարտավոր են հասարակությանն իրազեկել բնական բուժիչ ջրերի կազմի, բուժիչ հատկությունների և օգտակարության մասին:

Որսորդական տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսներն օգտագործվում են ջրօգտագործման թույլտվությամբ, բացառությամբ անձնական կարիքների համար օգտագործման դեպքերի, պայմանով, որ չխախտվեն ջրերի ստանդարտները:

Որսորդական նպատակներով ջրային համակարգերն օգտագործելու համար անհրաժեշտ է թույլտվություն ստանալ ջրային համակարգերը շահագործող կազմակերպությունից՝ տեղյակ պահելով Գործակալությանը:

> Թույլտվություն ստանալու համար գանձվում է պետական տուրք, ֆիզիկական անձանցից՝ 1000 դրամի, իսկ իրավաբանական անձանցից՝ 10.000 դրամի չափով:

Կենդանական աշխարհի անհետացող կամ անհետացման եզրին գտնվող տեսակների բազմացմամբ զբաղվող անձը ջրի բաշխման հարցում առավելություն ունի այլ անձանց նկատմամբ:

Ջրոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործումը կատարվում է ազատ ջրօգտագործման ռեժիմով՝ առանց թույլտվության, բացառությամբ, եթե.

ա) բնության հատուկ պահպանվող տարածքներում գտնվող ջրային ռեսուրսների օգտագործումը հակասում է այդ տարածքի համար սահմանված նորմերին,

բ) ջրային ռեսուրսների օգտագործումը խախտում կամ սպառնում է խախտել ջրերի ստանդարտները,

գ) նպատակաուղղված է շահույթ ստանալուն:

Ձկնային տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսները կարող են օգտագործել ՀՀ իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ Գործակալության կողմից թույլտվություն ստանալուց հետո:

Ձկնային տնտեսությունների ջրօգտագործումը պետք է բացառի ստորերկրյա ջրերի մակարդակի փոփոխությունը, տեղանքի ճահճացումը կամ չորացումը: Իրականացվող ջրառը պետք է պարտադիր կահավորված լինի ձկնարգելքով: Ջրօգտագործումը առանց արհեստական կառույցների թույլատրվում է միայն տվյալ ջրաէկոհամակարգին բնորոշ ձկնատեսակների բուծման պայմանով:

Ջրային օբյեկտներին (լճեր, գետեր, հեյզերներ, թերմալ և հանքային ջրաղբյուրներ, սառցադաշտեր և այլն) տրվում է միջազգային, հանրապետական կամ տեղական նշանակության **բնության հուշարձանի կարգավիճակ**: Միջազգային կարգավիճակի դեպքում դրանք պահպանվում են միջազգային պայմանագրերով սահմանված կարգով, հանրապետականի դեպքում՝ պետության, իսկ տեղականի դեպքում՝ մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Ջրային օբյեկտներն ստանում են բնության հուշարձանի կարգավիճակ, եթե օժտված են «Բնության